ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«2» հոկտեմբերի 2024 թվականի N: 461 -Ա քաղաք Գյումրի

«ՔԱՆԱՆ ԸՆԴ ՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի թվով 20 մանկապարտեզներին անհրաժեշտ գույքի ձեռքբերման համար 14.08.2024 թվականին հայտարարվել է ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16 ծածկագրով մրցույթ: «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ն վերոգրյալ մրցույթի 5-րդ չափաբաժնի (տեսակավորման դարակաշարեր) մասով ճանաչվել է հաղթող մասնակից:

«Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ն ՀՀ գնումների միասնական «AUCTION» համակարգի միջոցով 17.09.2024 թվականին ծանուցվել է որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի մասին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև վերոգրյալ մրցույթի հրավերի 10.1 կետի «Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է որակավորման և պայմանագրի (կանխավճարի) ապահովումները»:

Տվյալ դեպքում որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու վերջնաժամկետ է հանդիսացել 24.09.2024 թվականը, սակայն մինչև սահմանված ժամկետի ավարտը «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ն չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև չի ստորագրել պայմանագրի նախագիծը:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի «Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը կամ պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի և (կամ) որակավորման ապահովումը, իսկ կնքվելիք պայմանագրով կանխավճար նախատեսված լինելու դեպքում՝ նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից»:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կարիքների համար «ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16» ծածկագրով «ՀՀ Շիրակի մարզի համայնքների մանկապարտեզներին անհրաժեշտ գույքի ձեռքբերման» գնահատող հանձնաժողովի 27.09.2024 թվականի թիվ 4 որոշմամբ ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16 ծածկագրով մրցույթը 5-րդ չափաբաժնի մասով հայտարարվել է չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով: (գնահատող հանձնաժողովի 27.09.2024 թվականի թիվ 4

որոշումը և հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում և ուղարկվել է kananyan01@mail.ru էլեկտրոնային հասցեին):

Վերոգրյալի հիմքով «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ն զրկվում է ՀՀ ՇՄԱ ԷԱՃԱՊՁԲ-2024/16 ծածկագրով մրցույթի 5-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու իրավունքից («Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ն 01.10.2024թ. kananyan01@mail.ru էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերն առաջանալու վերաբերյալ):

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերության՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցողների ցուցակում, եթե՝ որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում:

Հաշվի առնելով, որ առկա են «Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ) պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.«Քանան Ընդ Յան» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշումը կայացնելու օրվան հաջորդող օրն այն տրամադրել լիազորված մարմնին և մասնակցին:

Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝